ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 4440-Ա « 15 » նոյեմբերի 2024թ.

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՓՈՂՈՑԻ Հ.46/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ԷԼԲԱՏ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Ղալթախչյանի դիմումը՝ Բագրատունյաց փողոցի հ.46/10 հասցեում գտնվող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 28.07.2011թ. հ.2825723 վկայական) հողամասի համար 19.05.2011թ. կնքված հ.49/Կ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը լուծելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածներով.

1.Լիազորել Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, «ԷԼԲԱՏ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Ղալթախչյանի հետ կնքել Բագրատունյաց փողոցի հ.46/10 հասցեում գտնվող 10.0քմ մակերեսով հողամասի համար 19.05.2011թ. կնքված հ.49/Կ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր՝ կատարելով համապատասխան փոփոխություն գույքի կառուցապատման բազայում:

2. Ընդունել ի գիտություն, որ կառուցապատման պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրից ծագող իրավունքի դադարումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ